

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ



ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ՀԱՄԱՅՆՔ	ՎԵՂԻ
ՄԱՐԶ	ԱՐԱՐԱՏ



1. ՊԱՏՄԱԿԱՆ ԱՎՆԱՐԿ

ՀՀ Արարատի մարզի Վեդի քաղաքում բնակվում են 13400 մարդ: Համայնքը համապատասխան ՀՀ օրենսդրությանը ղեկավարվում է 11 ավագանու և համայնքի ղեկավարի կողմից, որոնք ընտրվում են համայնքի բնակչության կողմից 5 տարի ժամկետով:

Վեդի քաղաքի հիմնադրման տարեթվի մասին ստույգ տեղեկություններ չկան: Նրա մասին առաջին հիշատակությունները գալիս են ուրարտական ժամանակներից: Նրա տարածքում և մոտիկ շրջապատում գտնվող բերդ - ամրոցները թվագրվում են Ք.ա. II-I հազարամյակներով, իսկ շինարարական աշխատանքների ժամանակ հանված կարասները վերագրվում են մեր թվարկության III-IV դարերին, գերեզմանոցում պահպանվել են խաչի նշանով գերեզմանաքարեր (IX-X դարեր): Վեդի անունը առաջին անգամ հիշատակվում է XIII-XIV դարերում՝ Նորավանքում Օրբելյանների թողած նվիրագրական արձանագրություններում: Այնուհետև այն տարբեր ձևերով Վեթի, Վադի, հիշատակվում է մինչև XIX դարի սկիզբը:

Ըստ ռուս աշխարհագիր Ի.Շոպենի, բնակավայրը 1830թ. ունեցել է Վերին Վեդի անվանումը: Այն 19-րդ դարի կեսին զբաղեցնում էր Վեդի գետի երկու ափերը, ուներ մեծ և հին եկեղեցի, 240 տուն թաթար և 12 հայ բնակիչ:

1828թ. Վեդի բասարի մահալում Մակուի շրջանից վերաբնակվել են 1170 շունչ հայեր՝ 640-ը Դավալում և 530-ը՝ Վեդիում:

XIX դարի վերջին Վեդին կոչվել է Մեծ /Բեյուք/ Վեդի, ուներ 2240 բնակչություն, այդ թվում 117 հայ գաղթական և հիմնականում թաթարներ /թուրքեր/: Վեդիի համար հայացման պրոցեսը սկսվել է XX դարի քառասնական թվականների վերջերին: Մինչև 1930թ. եղել է գավառակի կենտրոն, իսկ 1930թ. սեպտեմբերի 9-ի վարչական ռեֆորմով ստեղծվել է Վեդու շրջան, որից 1938 – 47 թթ. առանձնանում է Ղարաբաղլարի շրջանը: Վեդին 1958թ. ունեցել է 4500 բնակիչ:

1962թ. Վեդին ստանում է ավանի կարգավիճակ, 1996թ.՝ քաղաքի:

2. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Քաղաքի տեղանքը հարթ է, թույլ թեքված դեպի արևմուտք: Իսկ բուն կենտրոնական մասում գտնվում է հարթեցված գազաթով մոտ 10մ հարաբերական բարձրությամբ երկրաբանական ավելի հին ապարներից կազմված փոքրիկ բլուր: Ծովի մակերևույթից ունի 900 մետր բարձրություն: Մայրաքաղաքից հեռու է 48կմ., երկաթուղային Այգավան կայարանից՝ 8 կմ, իսկ Երևան-Երասխա ավտոմայրուղուց՝ 9 կմ.: Վեդին գտնվում է մերձարևադարձային կլիմայական գոտում, որտեղ ձնափոքվել է կլիմայի չոր, խիստ ցամաքային տիպը: Ձմեռը ցուրտ է, անամպ, անհողմ: Հաստատուն ձյունածածկույթ ձևավորվում է ոչ ամեն տարի: Բնորոշ է ջերմաստիճանային շրջադասությունը: Գարունը կարճատև է:

Ամառը շոգ է, տևական (4-5 ամիս): Բնորոշ են լեռնահովտային քամիները, որոնց արագությունը կեսօրից հետո հասնում է մինչև 15-20 մ/վրկ-ի: Լեռնահովտային քամիները մեղմացնում են Վեդի քաղաքի ամառային տապը: Հարաբերական խոնավությունը հասնում է 15-20%-ի:

Առանձնապես հաճելի է Վեդու արևոտ, անհողմ, տևական աշունը, երբ հասունանում են այգիների ու դաշտերի բարիքները:

Վեդիում բնական լանդշաֆտը կիսաանապատային է: Հումուսից աղքատ գորշահողերը հազարամյակների ընթացքում ջրովի երկրագործության պայմաններում վերածվել են կուլտուր-ռոտզելի հողերի: Տեղումների տարեկան քանակը 200-300մմ է:

3. ՀԱՄԱՅՆՔԻ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Մթնոլորտային տեղումների միջին տարեկան քանակը (մմ)	200-300մմ
Օդի միջին ջերմաստիճանը հունվարին (°C)	-29°
Օդի միջին ջերմաստիճանը հուլիսին (°C)	+42°

4. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Համայնքում ընդգրկված բնակավայրերը և դրանց հեռավորությունը համայնքի կենտրոնից 1.1) 1.2) 1.3)	-
2. Նախկին (ՀԽՍՀ) վարչական շրջանի անվանումը	Արարատի շրջան
3. Համայնքի հեռավորությունը՝	
3.1) մայրաքաղաքից (կմ)	48 կմ
3.2) մարզկենտրոնից (կմ)	22 կմ
3.3) պետական սահմանից ուղիղ գծով (կմ)	18 կմ
3.4) նախկին շրջկենտրոնից (կմ)	0
3.5) միջպետական նշանակության ավտոճանապարհից (կմ)	11 կմ
3.6) երկաթուղային կայարանից (առկայության դեպքում) (կմ)	8 կմ
4. Համայնքի բարձրությունը ծովի մակերևույթից (մ)	900 մ
5. Համայնքի վարչական տարածքը (քառ. կմ/հա)	40.2կմ ²
6. Սահմանակից համայնքների անվանումները	Դաշտաքար, Վանաշեն, Գոռավան, Սիսավան
7. Համայնքապետարանի էլեկտրոնային փոստի հասցեն	vedi.ararat@mta.gov.am
8. Համացանցային պաշտոնական կայքի հասցեն	www.vedicity.am
9. Համայնքի ղեկավարի հեռախոսահամարը	0234 24546
10. Համայնքապետարանի հեռախոսահամարը	0234 23332
11. Համայնքի հեռախոսային կոդը	0234
12. Համայնքում փոստային բաժանմունքի առկայությունը (այո, ոչ)	Այո
13. Համայնքապետարանի փոստային դասիչը	0611
14. Հաստատված գլխավոր հատակագծի առկայությունը (այո, ոչ)	Այո
15. Քաղաքացիների սպասարկման գրասենյակի առկայությունը (այո, ոչ)	Այո

5. ԲՆԱԿԶՈՒԹՅՈՒՆԸ, ԲՆԱԿԶՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱԶՄԸ

	2018թ.
1. Մշտական բնակչության թվաքանակը	13419
2. Գրանցված ծնունդների քանակը	163
2. Մահացության դեպքերի քանակը	74

3. Ամուսնությունների քանակը	38
4. Ամուսնալուծությունների քանակը	8
5. Տնային տնտեսությունների թիվը	2977
6. Ընտանեկան նպաստ ստացող տնային տնտեսությունների քանակը	532
7. Կենսաթոշակառուների քանակը	1560
8. Հաշմանդամություն ունեցող անձանց քանակը	216

6. ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ԿՐԹԱԿԱՆ, ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

	2018թ.
1. Գրադարանների քանակը	1
2. Արվեստի դպրոցների քանակը	1
3. Երաժշտական դպրոցների քանակը	1
4. Նախադպրոցական հիմնարկների քանակը	3
5. Հանրակրթական դպրոցների քանակը	3
6. Նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատությունների քանակը	0
7. Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների քանակը	0
8. Բարձրագույն ուսումնական հաստատությունների քանակը	0
9. Մարզադպրոցների քանակը	1

7. ԲՆԱԿԵԼԻ ՖՈՆԴ

	2018թ.
1. Համայնքի բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը (մ²)	55724 քմ
2. Բազմաբնակարան շենքերի ընդհանուր թիվը	38
3. Բնակելի տների (առանձնատների) ընդհանուր թիվը	1997

8. ՀՈՂԱՅԻՆ ՖՈՆԴ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	2018թ.
1. Հողեր, ընդամենը (հա)	1450
2. Գյուղատնտեսական նշանակության հողեր (հա)	1187.91
3. Բնակավայրերի ընդհանուր տարածքը (հա)	1258.06
4. Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը	1603
6. Մանր եղջերավոր անասունների (ոչխար և այծ) գլխաքանակը	2752
7. Խոզերի գլուխաքանակը	384
8. Գյուղատնտեսական տեխնիկա	11
8.1 տրակտորներ (քանակը)	11
8.2 կոմբայններ (քանակը)	-
9. Գյուղացիական տնտեսությունների թիվը	1100

9. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

1. Էլեկտրական ենթակայանների քանակը	38
2. Համայնքում գազիֆիկացման առկայությունը (այո, ոչ)	Այո
3. Համայնքում աղբավայրի առկայությունը (այո, ոչ)	Ոչ
4. Գերեզմանատան առկայությունը համայնքում (այո, ոչ)	Այո
5. Համայնքային ենթակայության ճանապարհների ընդհանուր երկարությունը (կմ)	52 կմ
6. Կոմունալ և ճանապարհաշինական տեխնիկայի առկայությունը	
6.1 Ինքնաթափ բեռնատար մեքենաների քանակը	17
6.2 Էքսկավատորների քանակը	2
6.3 Թրթուռավոր տրակտորների քանակը	3
6.4 Գրեյդերների քանակը	-
6.5 քանակը	-
6.6 Աղբատար մեքենաների քանակը	2
6.7 Բազմաֆունկցիոնալ կոմունալ մեքենաների քանակը	2
6.8 Վակուումային փոշեկուլ մեքենաների քանակը	1
6.9 Ավտոաշտարակների քանակը	1
7. Համայնքի տարածքով անցնող միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընդհանուր երկարությունը (կմ)	6 կմ
8. Համայնքի տարածքում գործող առևտրային բանկերի մասնաճյուղերի առկայությունը (այո, ոչ) և դրանց քանակը	Այո/3
9. Ներհամայնքային երթուղիների առկայությունը (այո, ոչ)	Ոչ

10. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Համայնքի վարչական բյուջեի եկամուտներ (հազ. դրամ)

	Ընդունված բյուջե	Փաստացի
1. Ընդամենը եկամուտներ	359969.0	359246.7
2. Հարկային եկամուտներ, ընդամենը այդ թվում՝	24000.0	24073.6
2.1 հողի հարկ	41500.0	46365.8
2.2 գույքահարկ	194862.5	194862.5
3. Պաշտոնական տրանսֆերտներ, ընդամենը	191361.9	191361.9
3.1 դոտացիա	3500.6	3500.6
3.2 սուբվենցիա	20000.0	10955.3
4. Մուտքեր հողի օտարումից		

Համայնքի վարչական բյուջեի ծախսեր (հազ. դրամ)

	Ընդունված բյուջե	Փաստացի
1. Ընդամենը ծախսեր	359969.0	348158.3

Համայնքի ֆոնդային բյուջեի եկամուտները (հազ. դրամ)

	Ընդունված	Փաստացի
--	-----------	---------

	բյուջե	
1. Ընդամենը ֆոնդային բյուջեի եկամուտներ	38526.0	28999.7

Ֆոնդային բյուջեի ծախսեր (հազ. դրամ)

	Ընդունված բյուջե	Փաստացի
1. Ընդամենը ծախսեր	38526.0	27981.7

11. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

1. Համայնքապետարանի աշխատողների թվաքանակը, մարդ որից՝ 1.1 համայնքային ծառայողներ	36 25
2. Ապարատի պահպանման ծախսերը, ընդամենը (հազ. դրամ)	61.373.0
3. Ավագանու անդամների թվաքանակը	10

12. ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Հիմնախնդիրը	Ակնկալվող լուծումը
Համայնքի կողմից մատուցվող ծառայությունների որակի բարձրացում	Համայնքային բյուջե
Արտադպրոցական կրթության ոլորտում մատուցվող ծառայությունների որակի բարձրացում	Համայնքային բյուջե
Մշակույթի տան պահպանման ծախսեր	Համայնքային բյուջե
Գրադարանի պահպանման ծախսեր	Համայնքային բյուջե
Նախադպրոցական կրթության ոլորտում մատուցվող ծառայությունների որակի բարձրացում	Համայնքային բյուջե
Կոմունալ ծառայության հիմնարկի պահպանման ծախսեր	Համայնքային բյուջե
Գիշերային լուսավորության ցանցի ընդլայնում /դեկորատիվ լուսավորության ցանցի ստեղծում/	Համայնքային բյուջե
Լուսավորության ցանցի էլ. էներգիա	Համայնքային բյուջե
Ա.Եղյան և Կասյան փողոցների ասֆալտապատում	
Պ.Սևակ փողոցի ասֆալտապատում	Սուբսիդավորում նաև համայնքային բյուջե
Հ.Շիրազ փողոցի մի հատվածի ասֆալտապատում	Սուբսիդավորում նաև համայնքային բյուջե
Գայի փողոցի բազմաբնակարան շենքերի բակերի ասֆալտապատում	Համայնքային բյուջե

Փողոցների բարեկարգում և շահագործում	Համայնքային բյուջե
Մայրերի սալիկապատում	Համայնքային բյուջե
Սան.մաքրման աշխատանքներ համայնքի տարածքում	Համայնքային բյուջե
Աղբահանություն	Համայնքային բյուջե
Կանաչապատման Ոռոգման ցանցի վերականգնում	Համաֆինանսավորմամբ
Խաղահրապարակների կառուցում բազմաբնակարան շենքերի բակերում	Սուբսիդավորում նաև համայնքային բյուջե
Բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգում /8 շենք/	Սուբսիդավորում նաև համայնքային բյուջե
Բազմաբնակարան շենքերի շքամուտքերի դռների փոխում	Համայնքային բյուջե
Նստարանների տեղադրում համայնքի բանուկ փողոցների մայրերին	Համայնքային բյուջե
Աղբամանների տեղադրում համայնքի բանուկ փողոցների մայրերին	Համայնքային բյուջե
Մանկապարտեզներում խաղահրապարակների տեղադրում	Համայնքային բյուջե
Թիվ 3 մանկապարտեզի հիմնանորոգում	Ներդրող այլ կազմակերպություն
Մանկապարտեզներում նոր խմբասենյակների ստեղծում	Համայնքային բյուջե
Մանկապարտեզների համար կենցաղային և էլ. Տեխնիկայի ձեռք բերում	Համայնքային բյուջե
Մանկապարտեզների սան.հանգույցների վերանորոգում / սպասարկող անձնակազմի համար/	Համայնքային բյուջե
Համաքաղաքային և հանրապետական միջոցառումների կազմակերպում	Համայնքային բյուջե
Գեղարվեստի դպրոցի պատուհանների փոփոխում	Համայնքային բյուջե
Գեղարվեստի դպրոցի ջեռուցման համակարգի միացում	Համայնքային բյուջե
Երաժշտական դպրոցի համար սան.հանգույցի կառուցում	Համայնքային բյուջե
Մարզադաշտում նստատեղերի կառուցում	Սուբսիդավորում նաև համայնքային բյուջե
Համայնքի սոց.անապահով ընտանիքներին աջակցություն	Համայնքային բյուջե
Նոր ծնված և նոր ընտանիք կազմած ընտանիքներին նվերների տրամադրում	Համայնքային բյուջե